Նախնեաց մերոց հաստատեալ է.
Եկեղեցեաց աթոռակալ է.
Սուրբ Լուսաւորիչ կաթուղիկէ.
Հաւատացելոց մեծ պարիսպ է.
Հայոց ազգի հայրապետ է.
Հերձուածողացըն վանիչ է.
Քէֆէ քաղաք ծովահայեաց
Եկեղեցիքըն զարդարած։
— Սուրբ Յարութիւն բերդի քով է.
Քարէ խաչերըն խիստ շատ է.
Տասը սեղան չըրչապատէ.
Մէկ քան զմէկըն պայծառ է։
Սուրբ Աստուածածին նոր ժամ է.
Զորեք կողմը Հայոց տուն է.
Հաւատացելոց մեզ յոյս է.
Դատաստանին բարեխօս է։
Սուրբ Անտոն փոքրիկ ժամ է.
Սուրբ Նիկողոս տեղըն տիւզ է.
Սուրբ Սիմեոն բերդէն դուրս է.
Մէջի նահատակն երկուս է։
Քէֆէ քաղաք ծովահայեաց,
Եկեղեցիքըն զարդարած։
— Սուրբ Քառասունք անանման է.
Կաթուղիկէն խանէ խանէ.
Վերնատունըն բարձրման է.
Երկոտասան աստիճան է։
Սուրբ Կարապետ տեղըն ձոր է.
Քովըն կ'ասեն մեծ ջըրհոր է.
Սուրբ Մերիամանոս տեղըն սար է.
Քաջամարտ զինաւոր է։
Սուրբ Օվանէս պատըն ցած է.
Զորեք կողմը պարըսպած է.